

ԳԻՐՔ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԵՎ ՄՏԱԾՈՂԻ ՄԱՍԻՆ

Թումանյանը գրում էր, թե արվեստը պետք է լինի աչքի նման պարզ և աչքի նման բարդ: Այդպիսին է և մեծ բանաստեղծի գրական ժառանգությունը: Ընթերցելիս այնքան պարզ և արժևորելիս ու իմաստավորելիս՝ այնքան բարդ: Այս պարզ աշխարհի բարդ խորհուրդներին է նվիրված բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Հրանտ Թամրազյանի նոր մենագրությունը*: Բազմավաստակ գիտնականը նախաբանում մարդկայնորեն խոստովանում է այդ աշխարհը մտնելիս իրեն պատած ներքին այն անվստահությունն ու երկյուղը, որ մարդ ունենում է «խոր անդունդին կամ ձյունապատ երկնասլաց բարձունքին նայելիս» և հաղթահարելով այն, ընթերցողին տանում է Թումանյանի բանաստեղծական աշխարհի երկնասլաց բարձունքները:

Ուսումնասիրության առաջին մասում, որը խորագրված է «Նախաբանի փոխարեն», մուտքն է Թումանյանի ստեղծագործական աշխարհ: Բանաստեղծը ներկայացվում է ժամանակի քննադատության հոլովանոցում, և թե անցնելիք ուղու գրական որոնումներում ինչպես է հայացքը հառում հայ բանաստեղծության անցած ճանապարհին:

Նրբին մի քննության են ենթարկված Նարեկացի, Աբովյան և Թումանյան ստեղծագործական ու հոգևոր ընդհանրությունները: Կարևորվում է հատկապես այն հանգամանքը, որ Նարեկացին «բացել էր գեղարվեստական մտածողության մի նոր դարաշրջան, որը ինչ-որ կարևորագույն և հավերժական բան էր փոխանցել նաև գալիք հազարամյակներին, հասել մինչև Թումանյան»: Այս կերպ մի նոր դարաշրջան էր բացել և Թումանյանը՝ գեղարվեստական հավերժական արժեքները փոխանցելով գալիքին, կամրջելով հայ բանաստեղծության դարերը: Նարեկացի-Թումանյան զուգահեռում նաև ցույց է տրվում Նարեկի ծալքերում պահված ազգայինը և Թումանյանի ազգային ցավի համամարդկային էությունը, թե ինչպես է համամարդկայինում արտացոլվում ազգայինը և ազգայինն էլ՝ վերածվում համամարդկայինի:

Այս գիրքն ունի յուրահատուկ մի կառուցվածք, ուր հեղինակը կարողացել է բաժին առ բաժին ներկայացվող Թումանյանի պոեզիայի ժանրային բաժանումը զուգակցել նրա կյանքի փուլերին՝ կենսագրական փոխարեն որոնելով կենսական այն ապրումները, որոնք իրենց լիցքերն են հաղորդել ծնվող գործերին: Հրանտ Թամրազյանի այս ուսումնասիրությունը նվիրված է ոչ թե Թումանյանի կյանքին ու բանաստեղծությանը, այլ բանաստեղծական կյանքին, էպիկական շնչով լեցուն երիտասարդ գրողի վիպերգության քննությունից մինչև կյանքի մայրամուտին ծնված

---

* **Հրանտ Թամրազյան,** Բանաստեղծը և մտածողը, Երևան, «Նաիրի» հրատարակչություն, 1995 թ.: Հրատարակություն ՀԲԸՄ Ալեք Մանուկյան մշակութային հիմնադրամի:

քաղյակները, և ամեն անգամ վերլուծությանը նախորդում է տվեալ գործի ստեղծագործական պատմությունը: Տարբերակների համեմատական քննությամբ վերլուծվում է, թե բանաստեղծի ստեղծագործական վարպետության շարունակական վերելքից բացի էլ ինչ նախադրյալներով և ազդակներով են պայմանավորված տարբերակից տարբերակ կատարված փոփոխությունները: Նամակների, հոդվածների, գրառումների և ժամանակակիցների հուշերի վկայակոչմամբ ընթերցողին հաղորդակից է դարձնում Թումանյանի ներաշխարհի այն ալեկոծումներին, որոնցից ծնվել են այդ գործերը:

«Վիպերգություն» խորագրված երկրորդ և ամենածավալուն մասն էլ սկսվում է «Անցման դարաշրջանի ողբերգության» քննությամբ, որը սոսկ ժամանակային անցում չէր, այլ նաև կացութաձևերի, հոգեբանության ու մտածողության հեղաբեկում: Անդրադառնալով գրականագիտության մեջ հաճախ հնչած այն կարծիքներին, թե Թումանյանը բնության և նահապետական անցյալի երգիչ է, գրում է, որ բանաստեղծը «գեղարվեստական բազում հայտնագործությունների շնորհիվ ժողովրդականից բարձրացել է դեպի ժողովրդայինը՝ մշտապես մնալով որպես նոր դարի և ժամանակի արվեստագետ»:

Գրքի պոեմներին նվիրված այս բաժինը բացվում է «Մարոյով», որով «Թումանյանի պոեզիայում սկսվում է մարմնավորվել հալածական մարդու թեման», շարունակվելով այնուհետև և «Լոռեցի Սաքոյով» ու արտացոլվելով ազգային ցավին նվիրված «Ալեքի» և «Մեհրի» գործերում: Թե ինչու վերջին երկուսը, չնայած գտած լավ ընտրությանը, բանաստեղծը երկրորդ անգամ չհրատարակեց, բացատրում է Թումանյանի ստեղծագործական հետագա ուղու զարգացման տրամաբանությամբ, երբ ճակատային բևեռացված հերոսների փոխարեն նրան ձգում է տառապող մարդը, իսկ հայ վրիժառուն կամ հերոսուհին բնականաբար հոգեբանական որևէ դրամա չէր կարող ապրել թշնամուց իր արդար վրեժը լուծելու ճանապարհին:

Ինչպես Թումանյանը ողջ կյանքում առանձնակի մի գուրգուրանք էր տածում «Անուշի» հանդեպ, նույն կերպ էլ ջերմ և նրբին մի սիրով է Թամրազյանը վերլուծում պոեմը՝ մեծ տեղ հատկացնելով դեպքերի զարգացման ընթացքի հոգեբանական հիմնավորվածությանը, միաժամանակ ներկայացնելով, թե այդ խնդիրը ինչպես էր կարևորում և Թումանյանը: Գրականագիտության մեջ ալնքան տարակարծությունների տեղիք տված նախերգանքի մասին գրում է. «Այստեղ շատ թանկագին ժողովրդական մտածողության մշուշը նրբորեն խառնվում է գալիք գործողությանը, որպես ողբերգական նախազգացողություն»: Մերժելով ողբերգական այս նախազգացողությունը ֆատալիզմի հանգեցնելու փորձերը և Թումանյանին Թումանյանով բացատրելով, շարունակում է հոգեբանական նրբին վերլուծումների ընթացքը՝ ցույց տալով, թե կանխազգացումը ինչ տեղ է գրավել գրողի ներաշխարհում, վկայակոչելով նրա հետևյալ տողերը. «Չեմ սխալվի, եթե ասեմ՝ իմ կյանքում մի որևէ դեպք չի պատահել, որ նախազգացած կամ նախատեսած չլինեմ: Նախազգացած ու նախատեսած որ ասում եմ, ասում եմ ոչ միայն արթուն ժամանակ, այլև քնած ժամանակ, երազում, այլաբանորեն, պատկերներով, խորհրդանշաններով. ... Ես էնքան շքեղ ու թանկ երազներ եմ տեսել, որ ամեն մինը ինձ համար մի գեղեցիկ կյանք արժի»: Գրականագետի վարպետությունն է՝ ցույց տալ, թե այս երազները ինչպես են միախառնվել «Անուշի» ընդհանուր հյուսվածքին, որն այս ուսումնասիրության մեջ կատարվել է բավականին գեղեցիկ և ինքնատիպ

ձևով, Թումանյանի ողջ ստեղծագործության ներքին մեծ զգացողությամբ:

Բանահյուսական ակունք ունեցող գործերին է նվիրված «Ժողովրդական գանձերը հանճարի լույսի տակ և ժանրային փոխանցումներ» բաժինը, որում ասվում է, թե այդ ստեղծագործությունները սոսկ բանահյուսական նյութի գեղարվեստական մշակումներ չեն, այլ ունեն գրության հոգեբանական պատճառաբանվածություն և կապվում են ազգային ճակատագրին՝ արձագանքելով նաև ժամանակի խնդիրներին: Այս առումով հատկանշական է «Որրը»: Որքան փոքր և տարողունակ է այն, այնքան էլ խորունկ և տարողունակ է թամրազյանական վերլուծությունը: Բերելով գրության համար աղբյուր ծառայած Գարեգին Սրվանձտյանցի գրառումը, բացատրում է, թե ինչով են պայմանավորված մշակման ընթացքում կատարված բովանդակային-սյուժետային փոփոխությունները:

Գրականության համապարփակ իմացության և գրականագիտական նրբին վերլուծության զուգակցմամբ ներկայացվում է դարասկզբի հայ բանաստեղծության մեջ որբի ընկալումը, և թե ինչպես Թումանյանը «հայ ժողովրդական ավանդության շրջանակը լայնացնելով, որբությանը տալիս է քաղաքական շեշտ»:

Սրհակ... Սրհակ... գիշերն ի բուն
Կանչում է Որբն աղեկտուր,
Աշխարքն այնինչ մրտած խոր քուն,
Ինքը մենակ ու շուրջը լուռ:

Այս տողերի վրայից ետ է տանում ժամանակի վարագույրը, մեզ փոխադրում դարասկիզբ՝ Որբի նման անպաշտպան մնացած Հայկական հարցի այլաբանական արձագանքը գտնելով վերը բերված հատվածում. «Ամեն գիշեր հնչում է որբի տխուր, աղեկտուր ձայնը, իսկ աշխարհը անվրդով մտել է խոր քուն, իսկ շուրջը հավերժական լռություն է: Այս է որբի ճակատագիրը՝ ողբի և որբի հայրենիքում»:

Նույն կերպ բացելով և մյուս բալլադների ու լեգենդների թաքուն ծալքերը, կատարում է հետևյալ ընդհանրացումը. «Թումանյանի երկերում ապրում ու արձագանքում են դարավոր ավանդները, հազարամյա խոհերն ու բարոյական ըմբռնումները: Բայց նա մի զարմանալի հմտությամբ անցյալի, ժողովրդականի, դարավոր նատվածքների հայտնագործումների ժամանակ շիկացնում, ընդգծում է նաև նորագույն դարի խնդիրները՝ առանց փոքը-ինչ մոդեռնացնելու նյութը»:

Գրքի վերջին բաժինը նվիրված է Թումանյանի քնարերգությանը, որում անձնականն ու անանձնականը, ազգայինը և համամարդկայինը արտացոլվում են առավել նրբին, անորսալի շեշտերով: Թումանյանի բանաստեղծությունները ևս քննվում են համաշխարհային պոեզիայի, միջնադարից եկող ազգային ավանդների և անցյալ դարավերջի ու այս դարասկզբի հայ բանաստեղծության հատման հոգևոր խաչուղիներում: Օրինակ՝ Թումանյանի քնարերգության մեջ խաթարված իրականության և մարդու բարոյական կերպարի գեղարվեստական հարաբերակցության վերլուծությունը սկսում է Հին Արևելքի պոեզիայում այս հարցի առաջին քնարական ընթախումներից մեկի, երկուսուկես հազար տարի առաջ գրված «Հիասթափվածի վեճը իր հոգու հետ» պոեմից, անցնում Նարեկին, ապա Շեքսպիրին:

Շնորհիվ նման մոտեցման, որը պահանջում է ոչ միայն գրականագիտական, այլև հոգեբանական քննության ոսկերչական աշխատանք, արդեն Շեքսպիրից, Գյոթեից, Բայրոնից, Պուշկինից ու Լերմոնտովից կրած անմիջական գրական ազդեցություններից բացի, որը բազմիցս շեշտվել է մեր գրականագիտության մեջ, ընդգծվում է մեկ այլ կարևոր խնդիր. որևէ մոտիվ, որն առավել ցայտուն է դրսևորվել հիշյալ գրողներից յուրաքանչյուրի մոտ, դիտել ոչ թե անմիջական ազդեցություն բանաստեղծի վրա, այլ համաշխարհային գրականության մեջ նրանց կողմից արծարծված և որպես այս շղթայի մեկ օղակ Թումանյանին փոխանցված:

Նաև տարբեր բանաստեղծությունների զարգացման ընթացքը տող առ տող վերլուծելով ցույց է տալիս մարդկային հոգու ապրումն ու ազգային ցավը և ողբերգությունը ինչպես են գրչի տիրական ուժով դառնում բանաստեղծական պատկեր ու փիլիսոփայություն, որոնք «իրենց մեջ թաքցնում են ծովի շարժման հզորությունը»: Այս հզորության ուժեղ խտացումներից մեկն է «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը:

Թամրազյանը թումանյանական գրառումներով և ժամանակակիցների հուշերով հագեցած ճանապարհով ընթերցողին նախ տանում է գեհենի վերածված արևմտահայ աշխարհ, ապա գաղթականության ալիքի հետ բերում Էջմիածնի պարիսպների տակ, ուր բաց երկնքի ներքո թափված ժողովրդի վրա ծանրացող գիշերային խավարում բանաստեղծի հոգում տառապանքի ցավից ճառագող լույսից ծնվում է «Հոգեհանգիստը», որում դառնության խոսքերը գրականագետի դիպուկ բնորոշմամբ «դարձել են փիլիսոփայական խորունկ բանաձև մարդու անմարդկային բնույթի մասին»:

Ազգային այս մեծ ողբերգությանը միահյուսված ցավից ծնվում են գրողի կյանքի վերջին շրջանի բանաստեղծական մարգարիտները՝ քառյակները, տառապող բանաստեղծի երազը «մանկան արդար քնի» և «հաշտ ու խաղաղ մարդկության»:

Այս գրքի յուրահատուկ արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակը շարադրանքի լեզուն և ոճն էլ ասես բխեցնում է վերլուծվող նյութից, և քառյակների վերլուծությունում մեկ անգամ ևս մեզ է փոխանցվում թումանյանական կարոտը, անցած օրերի բանաստեղծական վերհուշը. «Գարունքվա ծաղկոտ օրերի պես այդ հուշերը հյուր են գալիս արդեն խոնարհվող աշնան մեջ գտնվող բանաստեղծ անհատին, որն արդեն բռնված է խորհրդավոր անհայտի տագնապներով և կանգնած է անխուսափելիի առջև»:

Գրականագետը բանաստեղծի հետ քննում է աշխարհի չարն ու բարին, խորապես վերապրում «հայոց վիշտը»: Անդրադառնալով քառյակից քառյակ փոխանցվող «երջանիկ ակունքների» թումանյանական երազին, գրում է. «Համամարդկային այս երազները թերևս առավելագույն չափով արտահայտում են հայ ժողովրդի հոգեկան նկարագիրը, քանի որ երազներն ամենից ավելի հարազատ են զրկվածներին և ծաղկում են տառապող ու մաքառող, գալիքի դժվար ճամփեքի համար մարտեր մղող ժողովրդի հոգում»:

Համանման խտացումները գումարվելով թումանյանական խոհականությամբ շնչող ողջ շարադրանքին, Հրանտ Թամրազյանի «Հովհաննես Թումանյան. բանաստեղծը և մտածողը» գիրքը վերածում են գրականագիտական ասքի, մի ասքի՝ նվիրված Ամենայն Հայոց Բանաստեղծին և նրան ծնած ժողովրդին:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ